ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՄԱՊՁԲ-4/28-1

ք. Երևան

28 .11.2019թ.

<< պաշտպանության նախարարությունը, ի դեմս << պաշտպանության նախարարի տեղակալ Մ. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Լ. Մաթևոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 21431900 (քսանմեկ միլիոն չորս հարյուր երեսունմեկ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ սպառազինության վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ժակ և Գոռ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Հրազդան, Կենտրոն 19/40
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հրազդան մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 163158129250
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 03012667
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ	ՏՆՕՐԵՆ
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Լ. ՄԱՐԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ՀՄԱԱՊՁԲ-4/28-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական ցուցանիշներ	
1	Գլանների իրանի գլխիկ հավաքական	740.1003010-20 Կամազ-4310 մեքենայի	ԿամԱԶ-4310 մեքենայի, գործարանային փաթեթավորմամբ, , մակնիշավորումը գործարանային.
2	Գլանների իրանի գլխիկ հավաքական	740.30-1003010	ԿամԱԶ-43114 մեքենայի,հավաքական ("Евро II", -"Евро III") Գործարանային փաթեթավորմամբ,մակնիշավորումը գործարանային.
5	Շարժիչի գլան	740.1002021	ԿամԱԶ-4310 մեքենայի, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
6	Շարժիչի մխոց	740.1004015	ԿամԱԶ-4310 մեքենայի, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
8	Թափանիվ	740.1005115-01	ԿամԱԶ-4310 մեքենայի, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
9	Մխոցային օղակների լրակազմ	ВК.740.1000106	ԿամԱԶ-4310 մեքենայի, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
12	Բոցամուղի փոշեցիր հավաքական	33.1112110-12	ԿամԱԶ-4310 մեքենայի, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
14	Կոմպրեսոր հավաքական	740.350901	Կամազ-4310 մեքենայի գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
17	Առջևի ռեսորներ հավաքական	55111-2902012-01	Կամազ-4310 մեքենայի գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
18	Միջին կամրջակի ռեդուկտոր	4310-2502010 գլխավոր ատամանիվը 50 ատամով	Կամազ-4310 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
19	Հետևի կամրջակի ռեդուկտոր	4310-2402010 գլխավոր ատամանիվը 50 ատամով	Կամազ-4310 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
21	Առջևի կարդանային լիսեռ	43114-2203011 Եվրո-2/3	Կամազ-43114 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
23	Կարդանային լիսեռ	43114-2202011-01 Եվրո-2/3	Կամազ-43114 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
28	Ռեակտիվ ձգաձող հավաքական Կամազ	5511-2919016	Կամազ մեքենայի գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
29	Հիդրոուժեղարարի յուղի մղիչ հավաքական	4310-3407200-01	Կամազ-4310 մեքենայի գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
30	Հովացման համակարգի մղիչ	740.50-1307010	գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
31	Հովացման համակարգի մղիչ	740.63-1307010	ԵՎՐՈ -3 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
32	Տուրբոմղիչ հավաքական	7406.111801	ТКР-1-НК-740 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
35	Առանցկակալ	7815А	Կամազ-4310 մեքենայի գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
39	Կցորդիչի անջատող առանցկակալ	14.1601196-01	98671КС17 Կամազ-4310 մեքենայի գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
41	Մեկնարկիչ հավաքական	740.3708	Կամազ-4310 մեքենայի գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
43	Մեկնարկիչ հավաքական	СТ142Б1-3708000	Կամազ-43118 Եվրո-2/3, СТ142Б1ТУ37.003.1375-88 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
44	Գեներատոր	740.3701000-01	Գ-273Վ1 փոկանիվը 2 փոկի տեղով 28Վ, 45Ա գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
46	Փոկ 1320	740.130717	Կամազ-4310 մեքենայի գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
47	Փոկ	ՊԿ6-1703	Կամազ-43118 Եվրո-2/3, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
48	Վառելանյութի նորբ զտիչ	ФТ060.1117040	Կամազ-43118 Եվրո-2/3 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
49	Յուղի կոշտ զտման էլեմենտ	К-43118 7405-1017040	Կամազ-43118 Եվրո-2/3 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
50	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	33.1111007-02	Կամազ-4310 գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
51	Յուղի կոշտ զտիչ	М-5103	ՈՒրալ-432067 ՅԱՄԶ-236 շարժիչով մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
52	Առջևի ռեսոր հավաքական	500-2902012-52	ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
53	Արգելակման գլխավոր գլան	375-3505010-В	ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
55	Արգելակման կոճղակների մակադրակ	375-3501105-10	հին օրինակի ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.

56	Արգելակման կոճղակների մակադրակ	55571-3501105-10	նոր օրինակի ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
57	ՈՒժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով հավաքական	4320-3510010	ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
59	Կցորդման համակարգի գլխավոր գլան հավաքական	6361-1602510	նոր օրինակի ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
60	Շրջադարձի հոդակապ երկար հավաքական	5557-2303070	ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
61	Շրջադարձի հոդակապ կարճ հավաքական	5557-2303071	ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
62	Շրջադարձի հոդակապ երկար հավաքական	5557-2303070-10	նոր օրինակի ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
63	Շրջադարձի հոդակապ կարճ հավաքական	5557-2303071-10	նոր օրինակի ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
66	Գեներատոր	Г-288 4320-3701000	24Վ ՈՒրալ-4320 մեքենաների համար գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
67	Գործարկիչ	12В СТ230К4-3708000	Զիլ մեքենայի գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
71	Կոմուտատոր տարանցային	ТК-200-01	Զիլ-131 մեքենայի, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
72	Հովացման համակարգի ջրի մղիչ	130-1307009-Б3	Զիլ-131 մեքենայի, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
75	Հովացուցիչ	131-1301010	4 շերտանոց պղինձե, գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
77	Փոկ կոմպրեսորի	1103-16*11	գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
83	Կցորդման սկավառակ տարվող	130-1601130	գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.
87	Փոխանցմաքն տուփ հավաքական	315195-1700010-02	գործարանային փաթեթավորմամբ, մակնիշավորումը գործարանային.

Ծանոթություն՝
-Բնութագրերում նշված << Մակնիշավորումը գործարանային>> և <<փաթեթավորումը գործարանային>> դիտարկել պատադրող գործարանի կողմից նախատեսված չափանիշները:
-Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:
-Ապրանքները պետք է հանձնվեն ԱԾ կենտրոնական պահեստ (Եղվարդ զինավան):B97
Պայմանագրի կատարման փուլում անհրաժեշտ է ներկայացնել համապատասխանության սերտիֆիկատ:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ԴԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ

Լ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Գումարը /ՀՀ դրամ/	Գնման ժամանակացույց 2019թ. չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ 05.12.2019թ,
1	Գլանների իրանի գլխիկ հավաքական	հատ	16	47100	753600	16
2	Գլանների իրանի գլխիկ հավաքական	հատ	16	59500	952000	16
5	Շարժիչի գլան	հատ	72	12300	885600	72
6	Շարժիչի մխոց	հատ	72	10600	763200	72
8	Թռափանիվ	հատ	3	77200	231600	3
9	Մխոցային օղակների լրակազմ	կ-տ	8	47000	376000	8
12	Բոցամուղի փոշեցիր հավաքական	հատ	64	2800	179200	64
14	Կոմպրեսոր հավաքական	հատ	8	105000	840000	8
17	Առջևի ռեսորներ հավաքական	հատ	6	86000	516000	6
18	Միջին կամրջակի ռեդուկտոր	հատ	2	489000	978000	2
19	Հետևի կամրջակի ռեդուկտոր	հատ	2	489000	978000	2
21	Առջևի կարդանային լիսեռ	հատ	4	119000	476000	4
23	Կարդանային լիսեռ	հատ	6	119000	714000	6
28	Ռեակտիվ ծգածող հավաքական Կամազ	հատ	14	29000	406000	14
29	Հիդրոուժեղարարի յուղի մղիչ հավաքական	հատ	8	44000	352000	8
30	Հովացման համակարգի մղիչ	հատ	8	22000	176000	8
31	Հովացման համակարգի մղիչ	հատ	5	25500	127500	5
32	Տուրբոմղիչ հավաքական	հատ	6	109000	654000	6
35	Առանցկակալ	հատ	8	11000	88000	8
39	Կցորդիչի անջատող առանցկակալ	հատ	8	3800	30400	8
41	Մեկնարկիչ հավաքական	հատ	5	117000	585000	5
43	Մեկնարկիչ հավաքական	հատ	7	121600	851200	7
44	Գեներատոր	հատ	8	32500	260000	8
46	Փոկ 1320	հատ	30	1360	40800	30
47	Փոկ	հատ	40	2900	116000	40
48	Վառելանյութի նուրբ զտիչ	հատ	30	2360	70800	30
49	Յուղի կոշտ զտման էլեմենտ	հատ	60	1800	108000	60
50	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	հատ	3	205000	615000	3
51	Յուղի կոշտ զտիչ	հատ	50	5400	270000	50
52	Առջևի ռեսոր հավաքական	հատ	6	86000	516000	6
53	Արգելակման գլխավոր գլան	հատ	10	11900	119000	10
55	Արգելակման կոճղակների մակադրակ	հատ	160	2500	400000	160
56	Արգելակման կոճղակների մակադրակ	հատ	80	3200	256000	80
57	ՈՒԺային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով հավաքական	հատ	10	52200	522000	10
59	Կցորդման համակարգի գլխավոր գլան հավաքական	հատ	8	18900	151200	8
60	Շրջադարձի հոդակապ երկար հավաքական	հատ	5	72000	360000	5
61	Շրջադարձի հոդակապ կարճ հավաքական	հատ	5	72000	360000	5
62	Շրջադարձի հոդակապ երկար հավաքական	հատ	6	129000	774000	6
63	Շրջադարձի հոդակապ կարճ հավաքական	հատ	6	128000	768000	6
66	Գեներատոր	հատ	6	58000	348000	6
67	Գործարկիչ	հատ	6	48600	291600	6
71	Կոմուտատոր տարանցային	հատ	12	26900	322800	12
72	Հովացման համակարգի ջրի մղիչ	հատ	6	38400	230400	6
75	Հովացուցիչ	հատ	10	138000	1380000	10
77	Փոկ կոմպրեսորի	հատ	70	1640	114800	70
83	Կցորդման սկավառակ տարվող	հատ	8	9650	77200	8
87	Փոխանցմաքն տուփ հավաքական	հատ	3	349000	1047000	3

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ

Լ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ՀՄԱԱՊՁԲ-4/28-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2019թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2019թ. ընդ որում	
			նոյեմբեր	դեկտեմբեր
1	Գլանների իրանի գլխիկ հավաքական	34911150/434/14/1	753600	753600
2	Գլանների իրանի գլխիկ հավաքական	34911150/435/14/1	952000	952000
5	Շարժիչի գլան	34911150/438/14/1	885600	885600
6	Շարժիչի մխոց	34911150/439/14/1	763200	763200
8	Թափանիվ	34911150/441/14/1	231600	231600
9	Մխոցային օղակների լրակազմ	34911150/442/14/1	376000	376000
12	Բոցամուղի փոշեցիր հավաքական	34911150/445/14/1	179200	179200
14	Կոմպրեսոր հավաքական	34911150/447/14/1	840000	840000
17	Առջևի ռեսորներ հավաքական	34911150/450/14/1	516000	516000
18	Միջին կամրջակի ռեդուկտոր	34911150/451/14/1	978000	978000
19	Հետևի կամրջակի ռեդուկտոր	34911150/452/14/1	978000	978000
21	Առջևի կարդանային լիսեռ	34911150/453/14/1	476000	476000
23	Կարդանային լիսեռ	34911150/455/14/1	714000	714000
28	Ռեակտիվ ձգաձող հավաքական Կամազ	34911150/461/14/1	406000	406000
29	Հիդրոուժեղարարի յուղի մղիչ հավաքական	34911150/462/14/1	352000	352000
30	Հովացման համակարգի մղիչ	34911150/463/14/1	176000	176000
31	Հովացման համակարգի մղիչ	34911150/464/14/1	127500	127500
32	Տուրբոմղիչ հավաքական	34911150/465/14/1	654000	654000
35	Առանցկակալ	34911150/468/14/1	88000	88000
39	Կցորդիչի անջատող առանցկակալ	34911150/472/14/1	30400	30400
41	Մեկնարկիչ հավաքական	34911150/474/14/1	585000	585000
43	Մեկնարկիչ հավաքական	34911150/476/14/1	851200	851200
44	Գեներատոր	34911150/477/14/1	260000	260000
46	Փոկ 1320	34911150/479/14/1	40800	40800
47	Փոկ	34911150/480/14/1	116000	116000
48	Վառելանյութի նուրբ զտիչ	34911150/481/14/1	70800	70800
49	Յուղի կոշտ զտման էլեմենտ	34911150/482/14/1	108000	108000
50	Վառելիքի բարձր ճնշման պոմպ	34911150/483/14/1	615000	615000
51	Յուղի կոշտ զտիչ	34911150/484/14/1	270000	270000
52	Առջևի ռեսոր հավաքական	34911150/485/14/1	516000	516000
53	Արգելակման գլխավոր գլան	34911150/486/14/1	119000	119000
55	Արգելակման կոճղակների մակադրակ	34911150/488/14/1	400000	400000
56	Արգելակման կոճղակների մակադրակ	34911150/489/14/1	256000	256000
57	ՈՒժային ագրեգատ գլխավոր արգելակման գլանով հավաքական	34911150/490/14/1	522000	522000
59	Կցորդման համակարգի գլխավոր գլան հավաքական	34911150/492/14/1	151200	151200
60	Շրջադարձի հոդակապ երկար հավաքական	34911150/493/14/1	360000	360000
61	Շրջադարձի հոդակապ կարճ հավաքական	34911150/494/14/1	360000	360000
62	Շրջադարձի հոդակապ երկար հավաքական	34911150/495/14/1	774000	774000
63	Շրջադարձի հոդակապ կարճ հավաքական	34911150/496/14/1	768000	768000
66	Գեներատոր	34911150/499/14/1	348000	348000
67	Գործարկիչ	34911150/500/14/1	291600	291600
71	Կոմուտատոր տարանցային	34911150/515/14/1	322800	322800
72	Հովացման համակարգի ջրի մղիչ	34911150/516/14/1	230400	230400
75	Հովացուցիչ	34911150/519/14/1	1380000	1380000
77	Փոկ կոմպրեսորի	34911150/521/14/1	114800	114800
83	Կցորդման սկավառակ տարվող	34911150/527/14/1	77200	77200
87	Փոխանցմաքն տուփ հավաքական	34911150/608/14/1	1047000	1047000

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ԺԱԿ և ԳՈՌ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ

Լ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ՀՄԱԱՊՁԲ-4/28-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՀՄԱԱՊՁԲ-4/28-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն